

## **Իրան-Հայաստան փոխգործակցության առանցքը. պատմամշակութային կոթողներ և զբոսաշրջություն**

Իրանի Իսլամական Հանրապետությունը մշտապես մեծ կարեւորություն է տալիս հարեւանների հետ կապերին, իսկ առկա հարաբերությունների տիրույթում Հայաստանը արժանի տեղ է զբաղեցնում, ինչի հետեւանքով երկու երկրների միջեւ մշակութային և զբոսաշրջության ոլորտում էլ համագործակցության բնական ընդլայնումը իրականանում է պատմական եւ մշակութային անցյալի ու հզոր կապերի հիման վրա:

Երկու հարեւան և բարեկամ երկրների զբոսաշրջության ոլորտի պետական եւ մասնավոր հատվածների համագործակցության ընդլայնման հետեւանքով շոշափելիորեն կբարելավվի հայ-իրանական զբոսաշրջային միջավայրը, կստեղծվի զբոսաշրջային եւ մշակութային ոլորտներում փոխգործակցության ապահովման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների որակապես նոր համակարգ, ինչը համահունչ պետք է լինի երկու բարեկամ երկրների ու ժողովուրդների հազարամյա հարաբերություններին եւ քաղաքակրթական ձեռքբերումներին:

Հայաստան-Իրան կապերն առավել բազմակողմանի ու խորը դարձնելու ուղղությամբ փոխադարձ այցելություններ, մշակութային միջոցառումներ, համատեղ դասընթացներ և տուրիստական այցեր պետք է կազմակերպել առաջիկայում: Այդ իսկ առումով վերջին տարիներին փորձ է արվում զարգացնել Իրան-Հայաստան մշակութային կապերը, ակտիվացնել երկու երկրների միջև զբոսաշրջության հոսքը, որպեսզի երկրների ժողովուրդներն էլ ավելի ծանոթանան միմյանց հետ:

Տարբեր՝ հատկապես մշակութային և զբոսաշրջության ոլորտներում երկկողմ հարաբերությունների ընդլայնումը, անկասկած, մեծ լիցք կհաղորդի այսպես ասած տարածաշրջանային տուրիզմի զարգացմանը:

Ինչպես հայտնի է՝ Իրանը և Հայաստանը ունեն, մշակութային, պատմական և հասարակական շատ ընդհանրություններ, որոնք կարող են խթանել տուրիզմի տարբեր ոլորտների և պատմամշակութային կոթողների ծանոթացման և երկու հասարակությունների փոխայցելության զարգացմանը:

Զբոսաշրջության երևույթը ունի բազմաթիվ ասպեկտներ, ինչպիսիք են էկոտուրիզմը, պատմական, մշակութային, տնտեսական, առևտրային, գիտական, մարզական, կրոնական, առողջապահական և արկածախնդրային բնույթի զբոսաշրջությունը: Այս դասակարգման հիմքն է հանդիսանում զբոսաշրջիկի հիմնական նպատակն ու մտադրությունը: Նկատի առնելով Իրանի և Հայաստանի մեծ պոտենցիալները տուրիզմի տարբեր ոլորտներում, անհրաժեշտ եմ համարում անդրադառնալ այդ ոլորտում առավել կարևոր նշանակություն ունեցող երկկողմ համագործակցության խթանմանն ուղղված դրույթներին:

## **Առողջապահական զբոսաշրջություն**

Առողջապահական զբոսաշրջությունը ևս զբոսաշրջության տեսակներից է, որը վերջին տասնամյակներում ուշադրության է արժանացել աշխարհում:

Առողջապահական զբոսաշրջությունը զբոսաշրջության այն տեսակն է, որը իրականացվում է մարդու ֆիզիկական ու մտավոր առողջությունը պահպանելու, բարելավելու կամ վերականգնելու համար:

Առողջապահական բնույթի զբոսաշրջությունը աշխարհում համարվում է զբոսաշրջության աճող տեսակներից մեկը և օրեցօր մեծանում է առողջապահական բնույթի զբոսաշրջիկների թվաքանակը:

Աշխարհում բազմաթիվ երկրներ, այդ թվում զարգացող երկրները ձգտում են ներդրումներ կատարել այս արդյունաբերության մեջ և մեծացող մրցակցություն կա պետությունների միջև զբոսաշրջիկներին իրենց կողմը գրավելու համար: Բարեբախտաբար այդ ոլորտում Հայաստանն ունի բավականաչափ մեծ հնարավորություններ, որը պետք է ծանոթացնի այլ երկրներին հատկապես հարևան Իրանին:

Իրանը ևս առողջապահական զբոսաշրջության բնագավառում բարձր կարողություններով ակտիվ պետություններից է:

Տարեկան հազարավոր բժշկական բնույթի զբոսաշրջիկներ Իրան են այցելում առողջապահական ծառայություններ ստանալու նպատակով: Հետևաբար այս ոլորտում Իրան Հայաստան համագործակցության ծավալումն ու առողջապահական կենտրոնների փոխգործակցությունը և զբոսաշրջիկների փոխայցելությունը կարող է օգնել երկկողմ հարաբերությունների առավել ամրագրմանը:

## **Բուսական դեղերի արդյունաբերություն և փոխգործակցության ընդլայնում**

Բուսական դեղերի արդյունաբերությունն ազդեցիկ արդյունաբերություն է Իրանի տնտեսության մեջ: Այս արդյունաբերությունը հիմնավորված է տեղական գիտելիքի, աստվածային բարիքների և գիտելիքահեն տնտեսության վրա:

Բուսական բազմազանության առումով Իրանը հարուստ երկրներից է համարվում: Այդ բույսերի ավելի քան 1700 տեսակը տեղական են և միայն Իրանում են աճում և այս երկրի մենաշնորհն են համարվում: Այդ բույսերը տնտեսական բարձր արժեք են ներկայացնում և Իրանի ոչ-նավթային արտահանումների կարևոր արտադրանքներից են համարվում:

Քանի որ բուսական արտադրանքների ոլորտում Հայաստանը ևս ունի մեծ փորձ ու կարողություններ, ուստի Իրան-Հայաստան պետական և մասնավոր բաժինների համատեղ գործունեությունն անխուսափելի է թվում: Այս ոլորտում ևս զբոսաշրջիկները

կարող են մեծ դերակատարություն ունենալ երկկողմ հարաբերությունների ու գործակցության տարածման գործում:

### **Էկոտուրիզմ**

Էկոլոգիական զբոսաշրջությունն ըստ Վիքիպեդիայի ազատ հանրագիտարանի բացատրության (Էկոտուրիզմ, Էկոզբոսաշրջություն), բնության, նրա բաղադրիչների և պատմամշակութային հուշարձանների ճանաչողության նպատակով կազմակերպվող զբոսաշրջություն է: Էկոզբոսաշրջության խնդիրներն են բնական և մշակութային ժառանգության պահպանության օժանդակումը, ազգաբնակչության էկոլոգիական կրթության և իրազեկության բարձրացումը:

Էկոտուրիզմը բնության և մշակութային տեսարժան վայրերի ուսումնասիրության և ըմբռնելու նպատակով շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությամբ ճանապարհորդություն է կապված բնության չխախտված տարածքների հետ, որը նպաստում է շրջակա միջավայրի պահպանմանը և մեծ ազդեցություն է ապահովում տեղացի բնակիչների ակտիվ սոցիալ-տնտեսական մասնակցությանը և նրանց կողմից այդ գործունեությունից առավելությունների ստացումը:

Էկոտուրիզմը՝ որպես տուրիզմի ճյուղ, Հայաստանում նոր զարգացող երևույթ է, սակայն այսօր արդեն նկատելի են դառնում էկոտուրիզմի, էկոբիզնեսի զարգացման առաջին ծիլերը:

Հայաստանում վերը նշված նպատակները կարող են շատ ակտուալ լինել, որովհետև կարծում եմ Հայաստանում այդ բոլորն ունենք: Իսկ Հայաստանում էկոտուրիզմով զբաղվող ընկերությունները և պատմական կոթողների պահպանության ուղղությամբ աշխատող կենտրոնները, Իրանում համապատասխան բաժիններում զբաղվող ընկերությունների հետ համադրաբար կարող են իրենց աշխատանքի տիրույթը տարածել երկու երկրի սահմանամերձ շրջաններում: Այսպես հնարավոր է իրանցի և հայ զբոսաշրջիկների համար կազմակերպել փոխայցելություններ երկու երկրի սահմանների մերձակայքում գտնվող բնական և նույնիսկ պատմամշակութային տեսարժան վայրեր: Օրինակ հնարավոր է հայ և իրանցի տուրիստների համար միաժամանակ փոխայցելություններ կազմակերպել Սյունիքի Տաթևի և Իրանի Ատրպատական նահանգի պատմական վանքերը:

### **Հայ-պարսկական առնչություններ և իրանահայ համայնք**

Կլիմայական տարբեր շրջաններ ունենալով, վաղ ժամանակներից տարբեր ցեղախմբեր Իրանի բարձրավանդակն են ընտրել բնակություն հաստատելու համար և համակերպվել են այս տարածքի բնությանը:

Իրանի երկրամասում բնակություն հաստատած և պատմության ընթացքում գոյատևած ցեղախմբերից յուրաքանչյուրը հատուկ պայմանների ազդեցության ներքո ընտրել է ինչ-որ շրջան բնակության համար:

Բնակչության առումով Հայերն Իրանի կարևորագույն քրիստոնյա համայնքներից են համարվում;

Հայ-պարսկական առնչությունները հազարամյակների խորքից են գալիս: Պարսիկները հայերին ամենամոտ ցեղակից ազգն են: Հնում մեծ է եղել հայերի ազդեցությունը պարսիկների վրա: Նրանք մինչև երրորդ դարը՝ զրադաշտության ընդունումը, դավանում էին հայոց աստվածներին՝ Արամազդին, Անահիտին, Միհրին...

Միայն 1502 թ. պարսիկներն ազգային պետություն ստեղծեցին՝ Սեֆյան Իրանը, ինչը, պետք է խոստովանել, փրկություն դարձավ նաև հայության համար: Հզորացած Պարսկաստանը փակեց Միջին Ասիայից դեպի Արևմուտք թափանցող թուրքական ցեղախմբերի մուտքը, ինչը սպառնալիք էր Հայկական լեռնաշխարհի բնիկ բնակչության համար:

1600-ական թթ պարսից շահ Աբաս Առաջինը, կազմակերպեց հայերի գաղթը դեպի Իրան: Իրանի շահը ցանկանում էր հայ բնակչության հաշվին ոտքի կանգնեցնել Իրանի տնտեսությունը: Արարատյան երկրից շուրջ 300 հազար հայ տեղափոխվում է Պարսկաստան:

Ձևավորվում է Նոր Ջուղա հայաքաղաքը: Հայերը իսկապես մեծ ներդրում ունեցան պարսկական տերության տնտեսական և մշակութային կյանքում: Հայերի ձեռքում կենտրոնացավ միջազգային առևտրի զգալի մասը: Նոր Ջուղայի առևտրական կապիտալն այդ ժամանակներում հավասարը չունեի տարածաշրջանում:

Իրանահայ համայնքը Իրանի ազգային փոքրամասնություններից ամենախոշորն է: Իր գոյության ընթացքում համայնքի գոյատևման գլխավոր առանցքը կազմել է ինքնության, լեզվի և մշակույթի պահպանությունը:

Իսկ Հայաստանի բարեկամ ու հզոր հարևանի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ այսօր բարի դրացիական հարաբերություններ ունենալու և սերտ տնտեսական համագործակցության կարևորության մասին խոսելն ինքնին ավելորդ է:

Իրանի Իսլամական Հանրապետությունում գոյություն ունի բազմաթիվ հայկական մշակութային կոթողներ, որոնց իրանցիները վերաբերվում են նույն ուշադրությամբ եւ գուրգուրանքով, ինչպես իրանական մշակութային ժառանգությանը:

Իրանի վերաբերմունքը հայկական հուշարձանների նկատմամբ օրինակելի է հարեւան մյուս երկրների համեմատությամբ:

Մբ. Թադևոս Առաքյալի Վանքային համալիրը, Իրանի ամենահին և ամենանշանակալի քրիստոնեական կոթողներից է և իրենից ներկայացնում է երկրի հայկական առաքելական համայնքի հզորության կնիքը:

Նշեմ ԻԻՀ կառավարության և Մշակութային ժառանգության կազմակերպության կողմից տարած ջանքերի շնորհիվ Մբ. Թադևոս Առաքյալի և Մբ. Ստեփանոս Նախավկայի վանքային համալիրները 2008 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից գրանցվել է որպես Իրանի 9-րդ պատմամշակութային ժառանգության կոթողներ: Այժմ նման լուրջ աշխատանք է տարվում Նոր Ջուղայի վանքային պատմական համալիրը գրանցել ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության ցուցակում:

Ս. Թադևոս Առաքյալի վանքի ուխտագնացության կրոնական արարողությունը տեղի է ունենում ամեն տարի հուլիսին Իրանի Արևմտյան Ատրպատական նահանգում: Կարելի է ասել սա բացառիկ մի երևույթ է ամբողջ իսլամական աշխարհում երբ մի Մահմեդական երկիր. աշխարհի քրիստոնյաներին հյուրընկալում է Ս. Թադևոս Առաքյալի վանքի ուխտագնացության ընթացքում:

Այս վանքում Մբ. Պատարագի մատուցումը իրանական բոլոր ազգությունների ու կրոնների համագործակցության խորհրդանիշն է համարվում:

Սակայն սա նշան է նաև, որ մենք պետք է խորացնենք երկկողմ հարաբերությունները կրոնական տուրիզմի զարգացման ուղղությամբ: Կարևորագույն հարց է նաև երկու ժողովուրդների՝ միմյանց հանդեպ ճանաչողության մակարդակի բարձրացումը:

### **Գիտական երկկողմ հարաբերությունների ընդլայնում**

Իրանն ու Հայաստանը մեծ պոտենցիալներ ունեն, հատկապես գիտական ու տեխնոլոգիական ոլորտներում հարաբերությունների ընդլայնման համար:

Իրանի ու Հայաստանի միջև գիտական հարաբերությունների ընդլայնումը միտված է ամրապնդել երկկողմ հարաբերությունները:

Հայկական և իրանական կողմերը պետք է աշխատանք տանեն երկու երկրներում գիտական համագումարներ կազմակերպելու և գիտա-արդյունաբերական կենտրոնների համագործակցության ստեղծման ուղղությամբ:

Հայ-իրանական երկկողմ հարաբերությունների ընդլայնման մյուս կարևոր ոլորտը լրագրողների համագործակցության և տեղեկությունների փոխանակման դաշտն է, որն ունի բավականաչափ մեծ ու հուսալի հեռանկար:

Հայաստան-Իրան հարաբերությունները գրանցել են իրական տեղաշարժեր: Ամենակարևորն այն է, որ մենք ունենք պարբերական գործընթաց և զանազան

ուղորտները կարգավորող իրանցի պաշտոնյաների այցը Հայաստան չի դադարում: Հակառակ ուղղությամբ այցերն էլ են հաճախակի դարձել:

Այստեղ կարևոր է՝ իրանական հնարավորությունների օգտագործումը Հայաստանի ներսում ներդրումներ ապահովելու համար: Այս համատեքստում Հայաստանը կարող է լինել հրապուրիչ՝ հաշվի առնելով Հայաստանի ունեցած կապերը թե՛ Եվրասիական տնտեսական միության, թե Եվրամիության երկրների հետ:

Մի փոքր օրինակով էլ բացատրեմ տուրիզմի սոցիալական նշանակությունը: Ինչպես գիտենք, գիտատեխնիկական առաջընթացը արմատապես փոխեց ժամանակակից հասարակության կյանքը: Այս ամենը բերում է մարդու ներսում ֆիզիկական և հոգեբանական բնույթի հոգնածության առաջացմանը, որն էլ իր հերթին խթան է հանդիսանում մարդու կյանքի և աշխատանքային ակտիվության նվազման:

Տուրիզմը հանդիսանում է երկրի բարեկեցությունը բարձրացնող կարևոր գործոն: Այն կարելի է դիտարկել որպես համակարգ, որը առաջարկում է բոլոր հնարավորությունները ծանոթանալու համար տվյալ երկրի բնակչությանը, պատմությանը, մշակույթին, սովորույթներին, հոգևոր և կրոնական արժեքներին:

Տուրիզմը մարդկային գործոն է, տնտեսության զարգացման հիմնական ուժը, որը թելադրում է պատշաճ աշխատանք, երկրի մշակութային և հոգևոր արժեքների ճիշտ գնահատում ու այդ արժեքների ռացիոնալ կիրառում:

Կազմակերպված տուրիզմի համար Հայաստանում առկա է գրեթե ամեն ինչ: Կան լեռնադահուկային բազաներ, բնական հանքային աղբյուրներ, և այլն: Մակայն պետք է ավելացնել կազմակերպված տուրիզմի քանակը, նպաստավոր պայմաններ ստեղծել առողջարարական, բուժական և արկածային տուրիզմի համար:

Միջազգային և տարածաշրջանային զբոսաշրջային կառուցներ ինտեգրվելու մասով, հնարավոր է համագործակցություն ծավալել, եվրոպական, իրանական և հայկական ընկերությունների հետ:

Պետք է ստեղծել «Թրեյնինգ Կենտրոններ», «գիդերի կուրսեր», և անցկացնել «Վարպետության Դասեր (Master Class)»: Այս բնագավառներում հնարավոր է օգտագործել Իրանի հայ համայնքի ներուժից:

Հարկ է նշել, որ Հայաստանը և Իրանն ընկալվում են որպես տարածաշրջանային տուրիզմի զարգացման թե՛ կենտրոններ:

Վերջին տարիներին երկու հարևան և բարեկամ երկրների միջև նկատվում է զբոսաշրջիկների ակտիվ հոսք, որը, անկասկած, արդյունք է թե՛ պետության աջակցության, և թե՛ մասնավոր հատվածի բուռն գործունեության:

Ամփոփելով վերոնշյալ զեկույցը՝ հարկ եմ համարում նշել և բարձր գնահատել Իրանում ՀՀ դեսպանության ջանքերը մշակութային և առհասարակ երկկողմ համագործակցությունների ընդլայնման ուղղությամբ, մասնավորապես՝ պատմաշակութային կոթողների վերանորոգման հատվածի հետ համագործակցության հնարավորությունները:

Հայ գործարարները, գիտական ու մշակութային կենտրոնները և տուրիստական ընկերությունները բավական ակտիվ են և իրանական կողմի առաջարկը, համագործակցել այդ ոլորտներում, խիստ արդիական է:

Վստահ եմ, որ առաջիկայում, երբ կփորձենք քննարկել Հայ-Իրանական գործակցության ծրագրերը՝ այն կընդգրկի ոչ միայն վերոնշյալ ոլորտները, այլ նաև բազմաթիվ այլ հուսալի և արդյունավետ ասպարեզներ:

Շնորհակալություն:

**Շերլի Ավետյան**

**Իրանի պատմական եկեղեցիների կենտրոնի տնօրեն**